ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«ԴՏՊ-1160-11009/Ե-1/23»

«26»«հունվարի» 2023թ.

Քաղ. Երևան

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն), ի դեմս գլխավոր քարտուղար Սամվել Մուրադյանի (այսուհետ՝ պատվիրատու), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Լիարժեք կյանք» նեռարական հասարակության խթանման ՀԿ-ը, ի դեմս նախագահ Սուրեն Մաղաքյանի (այսուհետ՝ կատարող), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), **«Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում»** ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով նախարարությունը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ գումարից մինչև **7 430 000 (յոթ միլիոն չորս հարյուր երեսուն հազար)** ՀՀ դրամ, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով: **Ծրագիրը իրականցվում է Երևան քաղաքում՝ ամսական 18 տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող (չտեսնող) անձանց համար:**

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելված 1-ում:

1.3. Պայմանագրի գինը կարող է փոփոխվել երկկողմ համաձայնությամբ, եթե հաշվետու ժամանակահատվածում (եռամսյակում) պայմանագրում նշված արդյունքային բոլոր ցուցանիշների կատարողականի միջինացված ամփոփ գնահատականը չի կատարվել նվազագույնը 80 %-ով կամ չի ապահովվել շահառուների պլանային թվի նվազագույնը 80 %-ը՝ պայմանագրի 9.7.-րդ կետի համաձայն նոր համաձայնագիր կնքելու միջոցով:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունը իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.2.3 նախարարության համաձայնությունը ստանալու դեպքում՝ կատարել ՀՀ պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական միջոցների հոդվածային վերաբաշխում՝ բայց ոչ ավել, քան սույն պայմանագրի հավելված 6-ով սահմանված ֆինանսական նախահաշվի ծախսային յուրաքանչյուր հոդվածի 10%-ի չափով»:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով մինչև հաշվետու **ամսվան հաջորդող ամսվա 10-ը, իսկ դեկտեմբեր ամսվա համար մինչև դեկտեմբերի 20-ը, նախարարությանը ներկայացնել հանձնման-ընդունման ակտը՝ համաձայն սույն պայմանագրի N 5 հավելվածի և հաշվետվություններ համաձայն սույն պայմանագրի N 2 և 3 հավելվածների,** ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ (այդ թվում եռամսյակային հաշվետվություն) մինչև հաշվետու ժամանակահատվածի **հաջորդ ամսվա 10-ը, իսկ դեկտեմբեր ամսվա և 4-րդ եռամսյակի համար մինչև դեկտեմբերի 20-ը**, իսկ ծրագրի ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում ամփոփ հաշվետվություն:

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

2.4.8. Սույն պայմանագրի 4.1-րդ կետով սահմանված հանձնման-ընդունման ակտի հետ միաժամանակ Նախարարություն ներկայացնել կատարված փաստացի ծախսերի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարի ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5-Ն հրամանով սահմանված տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշվառմամբ հաշվետվությունը՝ համաձայն սույն պայմանագրի N 3 հավելվածի: «Հաշվետվությանը կից անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարների մասով կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթեր, ինչպես օրինակ՝ հաշիվ ապրանքագրեր, վճարման հանձնարարականներ, աշխատաժամանակի հաշվարկի թերթիկ, աշխատավարձի հաշվարկի կամ վճարման տեղեկագրեր, ճանապարհածախսերի փոխհատուցման թերթիկ և այլն»:

2.4.9. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը (ըստ պահանջի)

3.1. Նախարարությունը ըստ պահանջի ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության և/կամ նրա կողմից լիազորված կազմակերպության կամ անձի կողմից բացառապես նախօրոք մշակված հարցաթերթի միջոցով և/կամ ըստ անհրաժեշտության՝ առանց հարցաթերթի:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ և առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է կատարվող գործողությունների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով գործողություններին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր, ինչպես նաև կապ հաստատելով ծրագրի շահառուների հետ՝ նրանց շրջանում հարցում և եզրակացություն տալու նպատակով՝ առանց կազմակերպությանը տեղեկացնելու կամ ներգրավելու այս գործընթացում:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.6. Եռամսյակային հաշվետվությունների ներկայացված և համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա բոլոր արդյունքային ցուցանիշների կատարողականը գնահատվում է համապատասխան վարչության կողմից՝ ըստ անհրաժեշտության ամփոփ վերլուծությունների և մոնիթորինգի վարչության հետ համատեղ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է նախարարության և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատրման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը էլեկտրոնային համակարգի միջոցով նախարարությանն է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (հավելված N 5) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, նախարարությունը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա նախարարությունը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում նախարարությունը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում նախարարությունը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը նախարարությունը էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հանձնման-ընդունման ակտի հիման վրա՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 4) նախատեսված ամիսներին, ըստ պայմանագրի շրջանակներում փաստացի իրականացված միջոցառումների կատարման արդյունքի:

Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն նախարարության կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ

6.5 Նախարարության կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը: Սույն պայմանագրի գործողությունը տարածվում է կողմերի միջև 2023 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված դրամաշնորհային ծրագիրը (դրամաշնորային ծրագիրը՝ պետք է բխի միջոցառումների նկարագրի պահանջներից և մեթոդական ցուցումներից) հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը (հավելված 7):

9.2 այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո նախարարությունը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ նախարարությունը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով նախարարության կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3. Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4. կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը նախարարությունը հրապարակում է իր պաշտոնական՝ https://www.mlsa.am/?cat=142 կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

9.5. Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը նախարարությունը այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.6. Պայմանագրով ստանձնած պարտավորությունը դադարում է կատարման անհնարինությամբ, եթե դա առաջացել է այնպիսի հանգամանքից, որի համար կողմերից որևէ մեկը պատասխանատու չէ՝ պայմանագրի կատարման անհնարինության մասին ողջամիտ ժամկետում գրավոր ծանուցելով մյուս կողմին: Այդ դեպքում կողմերը իրավունք չունեն միմյանցից պահանջելու պարտավորության կատարում: Սույն կետում նշված պայմանագրի կատարման անհնարինության մասին ողջամիտ ժամկետում մյուս կողմին չծանուցելու դեպքում՝ չծանուցող Կողմը պարտավորվում է մյուս կողմին վճարել տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գնի 1 %-ի չափով:

9.7. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.8. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.9. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք. Երևան, Կառավարական տուն-3 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011030666 ՀՎՀՀ 01506515 Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան (անուն ազգանուն, ստորագրություն) Կ. Տ.	*Անվանումը*՝ «Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպություն *Հասցեն*՝ ՀՀ, ք.Երևան,Նորաշեն թաղամաս, 36/121 *Բանկի անվանումը*՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1570018829580700 ՀՎՀՀ՝ 06405487 Նախագահ՝ Սուրեն Մաղաքյան (անուն ազգանուն, ստորագրություն) Կ. Տ.



Հավելված 1

2023 թ. «հունվարի» «16»-ին
կնքված N ԴՏՊ-1160-11009/Ե-1/23 պայմանագրի

«ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԱՐԿԸ

Համառոտագիր

Ներկայացրեք ծրագրի ամփոփ նկարագիրը:

Ծրագիրը նպատակաուղղված է ապահովելու տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող (չտեսնող) անձանց ինքնուրույն կենցաղավարման, տեղաշարժվելու, տրանսպորտից օգտվելու իրավունքը, ուսուցանելու և զարգացնելու անկախ կյանք վարելու հմտությունները, նպաստել նրանց սոցիալ-հոգեբանական խոչընդոտների հաղթահարմանը, սոցիալական ներառմանը հասարակություն:

Նպատակին հասնելու գործողությունները ներառում են և չեն սահմանափակվում հետևյալով տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց սպիտակ ձեռնափայտով տեղաշարժվելու հմտությունների ուսուցանում և աջակցություն՝ հաղթահարելու սոցիալ-հոգեբանական բնույթի խոչընդոտները, ինչպես նաև մանր և խոշոր մոտորիկայի, լսողական ընկալման, շոշափելիքի, համի, հոտոտելիքի զգայարանների և դրանց արդյունավետ գործածման հմտությունների զարգացում, հավասարակշռության, ճիշտ կեցվածքի, ճիշտ քայլքի, որոշակի ուղղությամբ անշեղ քայլելու հմտությունների զարգացում: Տեղեկատվական տեխնալագիաների՝ համակարգչային և հեռախոսային սարքերի հատուկ ծրագրերի ուսուցում: Նախատեսվում է նաև տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությամբ կազմակերպել տարաբնույթ միջոցառումներ, ինչպես նաև հասարակական նշանակության

Բարձրացնել հասարակության գիտակցությունը տեսողության խնդիրներ ունեցող անձանց հասարականան կյանքին մինուսների հետ համահավասար մասնակցության հարցում առկա կարծրատիպերը:

Ծրագրի նկարագրություն

Հիմնախնդրի և կարիքի հիմնավորում

Տեսողության խնդիրներ ունեցող մարդիկ ամբողջ աշխարհում և Հայաստանում մշտապես բախվում են խնդիրների, ինչպիսիք են կրթական ռեսուրսների, տեղեկատվական մատչելիությունը և միջանձնային հարաբերությունները, և եթե հաշվի առնենք, որ Հայաստանում սակավաթիվ է տեսողության խնդիրներ ունեցող անձանց տրամադրվող մասնագիտական ծառայություններ մատուցող կազմակերպություններն ու անհատները, հասկանալի է դառնում, որ վերը նշված խնդիրները տեսողության խնդիրներ ունեցող մարդ;կանց հետ, հաճախ, մնում են ամբողջ կյանքում:

Նկարագրեք ներկա վիճակը և հիմնավորեք՝ ինչու է անհրաժեշտ ծրագիրը:

Ազատ տեղաշարժի, տեղեկատվության, իրավունքների պաշտպանության, կրթական ռեսուրսների անմատչելիության պայմաններում տեսողության խնդիրներ ունեցող մարդիկ հնարավորություն չեն ունենում լիարժեք ինքնադրսևորվել, հաճախ կախված են իրենց ընտանիքիների անդամներից և չունեն անկախ կյանքով ապրելու հնարավորություններ:

Այսպիսի պայմաններում տուժում է անձի ոչ միայն կրթությունը, զբաղվածությունը, այլ նաև միջանձնային հարաբերություններ ստեղծելու հավանականությունը:

Ծրագրի անհրաժեշտությունը շատ մեծ է, քանի որ ծրագրին շահառուների ծրագրին մասնակցության արդյունքում կունենանք հասարակության մեջ իրենց տեղը գտած, հասարակական կյանքին մասնակցող, անկախ կյանքի հմտություններին տիրապետող անկախ անհատներ, ովքեր կկարողանան ունենալ սեփական նախաձեռնություններն ու հետաքրքրությունները: Ինչպես նաև մեծ ազդեցություն կլինի մյուս անձանց վրա և ընտանիքների, որտեղ կան թուլ տեսնող կամ չտեսնող անձինք, որոնք կցանկանան ստանալ անհրաժեշտ հմտություններ՝ ստանալ անկախ կյանք վարելու հնարավորություն: Նաև հասարակությունը կսկսի առավել ուշադիր և հանդուրժող վարք և վերաբերմունք ցուցաբերել հասարակության վերը նշված անձանց հանդեպ:

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

Համառոտ կերպով նկարագրել՝ որն է ծրագրի նպատակը և ինչ արդյունքներ են ակնկալվում ծրագրի ավարտին:

Ծրագրի նպատակն է նպաստել տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող (չտեսնող) անձանց սոցիալական ներառումը հասարակություն՝ անկախ կյանք վարելու, ինքնուրույն կենցաղավարման, տեղաշարժվելու, համակարգչային հատուկ ծրագրերի ուսուցման, տրանսպորտից օգտվելու, տարածական կողմնորոշման և սոցիալ-հոգեբանական խոչընդոտների հաղթահարման հմտություններ զարգացնելու միջոցով:

Ծրագրի խնդիրներն են

1) Իրականացնել տեսողության խնդիրներ ունեցող 18 անձանց համար սոցիալ-հոգեբանական վերականգնման աշխատանքներ՝ սեմինար-պարապմունքների, դասընթացների միջոցով ուսուցանել տեղեկատվական տեխնալագիաների /համակարգչային, հեռախոսի և դյուր կիր այլ սարքավորումների հատուկ ծրագրերի, սպիտակ ձեռնափայտի միջոցով տեղաշարժման և կենցաղավարման հմտությունների ուսուցում՝

2) Տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց համար իրականացնել մանր և խոշոր մոտորիկայի, լսողական ընկալման, շոշափելիքի, համի, հոտոտելիքի զգայարանների և դրանց արդյունավետ գործածման հմտությունների զարգացման, հավասարակշռության, ճիշտ կեցվածքի, ճիշտ քայլքի, որոշակի ուղղությամբ անշեղ քայլելու հմտությունների, ինքնուրույն և անվտանգ տեղաշարժվելուն, միկրո և մակրո միջավայրերում անկախ և ինքնուրույն կյանք վարելու հմտությունների զարգացանը ուղղված պարապմունքներ:

3) Կազմակերպել փոխօգնության սեմինար-հանդիպումներ, այդ թվում առցանց՝ հատուկ ծրագրի գործածմամբ/տեսողության խնդիրներ ունեցող անձանց, նրանց ընտանիքի անդամների մասնակցությամբ՝ կարծրատիպերի, վերաբերմունք և վախերի հաղթահարման, ինչպես նաև տեսողության խնդիրներ ունեցող անձանց ինքնուրույնությունը զարգացնելու և անկախ կյանքով ապրելու հարցում պատրաստ լինելու խրախուսելու և աջակցելու համար:

4) Տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց համար կազմակերպել տարաբնույթ միջոցառումներ, ինչպես նաև ապահովել իրենց համայնքում կազմակերպվող մշակույթային, մարզական և այլ համանման միջոցառումներին վերջիներիս մասնակցությունը, բացի նշվածից տեսանելիության և արդյունքների տարածման առավելագույն համար շահառուների հետ միասին ակտիվորեն մասնակցել ՀԼՄ միջոցառումների և իրազեկման արշավների:

5) Իրականացնել խորհրդատեղեկատվական աջակցություն ծրագրում ընդգրկված տեսողության խնդիրներով անձանց և ընտանիքներին առողջապահական, սոցիալական–իրավական, կրթական և այլ հարցերի շուրջ, խորհրդատեղեկատվական աջակցություն կարող են ստանալ նաև ծրագրում դեռևս չընդգրկված տեսողության խնդիրներով անձիք ՝ զանգահարելով կազմակերպությունում գործող թեժ գծի 08000 13 11 հեռախոսահամարով:

6) Ապահովել շահառուների 7 օրյա ամառային հանգիստ «Լիարժեք կյանք ամառային ներառական ճամբար» -ում:

Արդյունքներն են

- Ձևավորել և զարգացնել է ծրագրում ընդգրկված թվով 18 շահառուների ինքնասպասարկման, կենցաղավարման հմտությունները:
- Բարելավել և զարգացել է ծրագրում ընդգրկված թվով 18 շահառուների կարողությունները, հմտությունները, ավելացել է համայնքային կյանքին նրանց լիարժեք մասնակցությանը, շահառուները զինվել են նրանց կարողություններին համարժեք գիտելիքներով և անկախ և ինքնուրույն կյանք վարելու կարողություններով, փոխել է վերաբերմունքն իրենց խնդիրների և շրջապատում իրենց ունեցած դերի նկատմամբ:
- Շահառուների մասնակցությամբ կազմակերպվել է նվազագույնը 2 միջոցառում՝ ուղղված վերջիներիս սոցիալական ներառմանը:
- Ծրագրի տեսանելիության և արդյունքների առավելագույն տարածման համար շահառուների հետ միասին առնվազը երկու հանրապետական սփռման ՀԼՄ-ով լուսաբանում:

Նշված արդյունքների գնահատման չափանիշներն են

- շահառուների թվին համապատասխան սոցիալ-վերականգնողական անհատական ծրագրերի առկայություն:
- Շահառուների այցելությունների գրանցում այդ նպատակով պահվող մատյանում
- Հաճախումների պլանի /դասացուցակի/, մոդուլների առկայություն:
- Սոցիալ-վերականգնողական անհատական ծրագրերի իրականացման արդյունքում շահառուների մոտ կարողությունների և անկախ կյանքի հմտություններ 70% աճ, որը ստուգվում է սահմանված ժամկետներում իրականացված կարիքի գնահատման և թեստերի միջոցով:
- Ծառայություններ ստացած շահառուների և նրանց ընտանիքների առնվազն 70%-ի կողմից բավարարվածություն մատուցված ծառայություններից: Այս կետի չափումը իրականացման համար կիրառվում է խորին հարցազրույցի, տեղեկատվության հավաքագրման որակական մեթոդով՝ կազմակերպության մոնիթորինգի պատասխանատուի կողմից նախօրոք կազմված գնահատման թերթիկի հարցաշարով:

Գործողություններ

1.1 Նախարարության հետ համաձայնեցված մեթոդաբանության հիման վրա բազմամասնագիտական թիմի կողմից բոլոր շահառուների կարիքների և կարողությունների գնահատում/ոչ ուշ, քան կիսամյակը մեկ/ և սոցիալ-վերականգնողական անհատական զարգացման ծրագրի կազմում.

1.2 Շահառուի հետ աշխատող մասնագետների պարապմունքների, և ծառայությունների նախանշում՝ մշակված մոդուլների հիման վրա

1.3 Կարիքների գնահատում կիսամյակը մեկ անգամ, ավելի կարճ ժամանակահատվածով հաճախումների դեպքում՝ սկզբում և վերջում:

2.1 Ֆիզիկական պատրաստվածություն (չտեսնող անձանց ինքնուրույն և անվտանգ տեղաշարժվելուն ֆիզիկապես պատրաստելուն ուղղված գործնական միջոցառումներ.

2.2 պարապմունքներ և սպիտակ ձեռնափայտի միջոցով տեղաշարժման և կենցաղավարման հմտությունների ուսուցում՝ կենտրոնում , և/կամ կենտրոնի տարածքից դուրս/դաշտային աշխատանք/:

2.3 մանր և խոշոր մոտորիկայի, լսողական ընկալման, շոշափելիքի, համի, հոտոտելիքի զգայարանների և իրական կյանքում դրանց արդյունավետ գործածման հմտությունների զարգացան ուսուցողական վարժություններ, այդ թվում հավասարակշռության, ճիշտ կեցվածքի, ճիշտ քայլքի, որոշակի ուղղությամբ անշեղ քայլելու հմտությունների զարգացում.

3.1 սեմինարներ հմուտ բանախոսների աջակցությամբ, այդ թվում՝ հաջողության հասած հաշմանդամություն ունեցող անձինք, հատուկ մանկավարժներ և այլն).

3.2 Տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող 18 անձանց համար կազմակերպել տարաբնույթ միջոցառումներ, ինչպես նաև ապահովել իրենց համայնքում կազմակերպվող մշակույթային, մարզական և այլ համանման միջոցառումներին վերջիներիս մասնակցությունը, կազմակերպել էքսկուրսիաներ:

3.3 Սեմինար-հանդիպումներ ընտանիքի անդամների հետ, որոնք միտված են օգնել և զարգացնել շահառուների ընտանիքի անդամների գիտելիքներն ու հմտությունները, որոնք կօգնեն նաև ինքնուրույն լուծել տարբեր ատյաններում ի հայտ եկող խնդիրները:

3.4 կազմակերպել տարեկան 3 կամ ավելի միջոցառում՝ ուղղված շահառուների սոցիալական ներառմանը:

4.1 Հանրային երկու միջոցառման կազմակերպում և համայնքում կազմակերպվող մշակույթային, մարզական և այլ համանման թվով 3 կամ ավելի միջոցառումների շահառուների մասնակցության ապահոդում:

4.2 Մասնակցել/նաև շահառուների հետ միասին/ հանրապետական սփռում ունեցող ՋԼՄ ունեցող հեռուստա կամ ռադիո հաղորդաշարի, որի ժամանակ ներկայացնել ծրագրի ընթացքը և հաջողության պատմությունները:

4.3 Կազմակերպության պաշտոնական վեբ կայքում և սոց. ցանցերի էջերում պարբերաբար տեղադրել ծրագրի առաջընթացի և շահառուների հաջողությունների մասին պատմող լուսաբանումներ:

5.1 Շահառուներին և թեժ գծով դիմած տեսողության խնդիրներ բոլոր անձանց սոցիալ-իրավական խորհրդատվության տրամադրում

5.2 Ծրագրի կողմից թեժ գծով/ 08000 13 11/ տրամադրվող խորհրդատվություն ստանալու հնարավորության մասին տարբեր հարթակներով տրամադրել տեղեկատվություն:

6.1 «Լիարժեք կյանք ամառային ներառական ճամբար» -ում շահառուների ամառային հանգստ կազմակերպում՝ ստացված գիտելիքների կիրառմամբ և , ամրապնդմամբ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Կազմակերպություն ՝ «Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման ՀԿ

Ծրագիր «Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում- հանուն անկախ կյանքի»

Ժամանակահատված 01.01.2023թ. - 31.12.2023թ.

Հ/Հ	Գործողություն	Պատասխանատու	Ամիս											
			1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Կարիքների և կարողությունների գնահատում և անհատական զարգացման ծրագրի մշակում	Ծրագրի համակարգող Բազմամասնագիտական թիմ												
2	Կենտրոնում , և/կամ կենտրոնի տարածքից դուրս/դաշտային աշխատանք/ ծրագրի աշխատանքային ծավալներով նախատեսված կարողությունների զարգացման ուսուցում	Ծրագրի համակարգող Բազմամասնագիտական թիմ												
3	Սեմինար-հանդիպումներ և միջոցառումներ	Ծրագրի համակարգող Բազմամասնագիտական թիմ												

4	Հանրային միջոցառումներ և ՁԼՄ լուսաբանում	Ծրագրի ղեկավար Ծրագրի համակարգող Սոցիալական աշխատող												
5	Սոցիալ- իրավական խորհրդատվություն/ թեժ գիծ	Իրավախորհրդատվության և մոնիթորինգի մասնագետ												
6	Մարզա-մշակույթային ամառային ճամբար	Ծրագրի ղեկավար Ծրագրի համակարգող Սոցիալական աշխատող												
7	Ծրագրի մշտադիտարկում և գնահատում	Ծրագրի ղեկավար Իրավախորհրդատվության և մոնիթորինգի մասնագետ												
8	Ծրագրային և ֆինանսական հաշվետվությունների կազմում	Ծրագրի ղեկավար Ծրագրի համակարգող Ծրագրի հաշվապահ												

Ծրագրի շահառները

Շահառուներ՝

- Տեսողության խնդիրներ ունեցող (չտեսնող) թվով 18 անձ
- Տեսողության խնդիրներ ունեցող անձանց ընտանիքի անդամներ

Ծրագրի աշխատակազմը

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում –հանուն անկախ կյանքի

դրամաշնորհային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ մասնագետների մասին

հ/հ	ՀԱՍՏԻՔ	Ազգանուն,անուն	Պատասխանատվության շրջանակը
1	Կազմակերպության նախագահ/Ծրագրի ղեկավար	Մաղաքյան Սուրեն	Պատասխանատվություն է կրում ծրագրի իրականացման սահուն ընթացքը ապահովելու,համակարգելու և վերահսկելու համար
2	Ծրագրի համակարգող/գործառնությունների ղեկավար	Ղազարյան Տաթևիկ	Պատասխանատվություն է կրում ծրագրի ընթացիկ գործունեության կազմակերպման,ծրագրման ,ամենօրյա խնդիրների համակարգման և հսկողության համար:Իրականացնում է գնումների գործընթացը, ամենամսյա և եռամսյակային հաշվետվությունների կազմումը և ժամանակին ներկայացումը:
3	Հաշվապահ	Գևորգյան Գոհար	Պատասխանատվություն է կրում ծրագրի ֆինանսական միջոցների նպատակային ծախսման ,ֆինանսական հաշվետվությունների ժամանակին և ճշգրիտ կազմման և ներկայացման համար:
4	Սոցիալական աշխատող	Գևորգյան Հենրիկ	Պատասխանատվություն է կրում շահառուների հայտնաբերման,տեղեկատվական բազայի ստեղծման համար:Կազմակերպում է շահառուների ամենօրյա հաճախելիությունը,իրականացնում է խորհրդա-տեղեկատվական աջակցություն,կազմակերպում է տարաբնույթ միջոցառումներ,սեմինար քննարկումներ:
5	Սոցիալական աջակցող	Հասմիկ Պապյան	Պատասխանատվություն է կրում շահառուների սոցիալիզացիայի ապահովման ուղղությամբ:Ձևավորում և զարգացնում է շահառուների ինքնասպասարկման հմտությունները:
6	Իրավախորհրդատվության և մոնիթորինգի մասնագետ	Մարգարյան Նոննա	Պատասխանատվություն է կրում ծրագրի շահառուներին տրվող իրավախորհրդատվության ,ծրագրի ընթացքի մոնիթորինգի իրականացման համար:Աջակցում է ծրագրի

			ցուցիչներին ուղղված միջանկյալ քանակական և որակական գնահատման իրականացմանը:
7	Տիֆլոմանկավարժ	Սահակյան Ալվարդ	Պատասխանատվություն է կրում շահառուների սպիտակ ձեռնափայտի միջոցով տեղաշարժման ուսուցման,մանր և խոշոր մոտորիկայի,լսողական ընկալման,շոշափելիքի,համի հոտոտելիքի զգայարանների և դրանց արդյունավետ օգտագործման հմտությունների զարգացման համար
8	Համակարգչային ուսուցման մասնագետ	Արզումանյան Վահե	Պատասխանատվություն է կրում ծրագրի շահառուներին համակարգչային հատուկ ծրագրերի ուսուցման,տարածական ճանաչողության,կապի միջոցներից օգտվելու հմտությունների ուսուցման համար:
9	Վարորդ/ասիստենտ	Հաջի-Հակոբյան Գրիգոր	Պատասխանատվություն է կրում ծրագրի շահառուների տեղափոխման համար:Իրականացնում է ծրագրի ընթացքում առաջացած տնտեսական խնդիրների լուծումը ,տեխնիկական աջակցություն է ցուցաբերում կենտրոնի շահառուներին:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 2

2023 թ. «հունվարի» «26»-ին
կնքված N ԴՏՊ-1160-11009/Ե-1/23 պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N_____

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	
Դրամաշնորհի N	
Դրամաշնորհատու կազմակերպություն	
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 3

2023թ. «հունվարի» «26»

կնքված N *ԴՏՊ-1160-11009/Ե-1/23* պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 202__ թվականի պետական բյուջեի----------ամսում փոփոխուն ծախսերի գծով փոխհատուցման ենթակա և հաստատուն ծախսերի գծով փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ

Ծախսային հոդվածներ		Հաստատված նախահաշվի գումարը		Հաշվետու ժամանակահատվածում			Տարեսկզբից աճողական			
Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը	ծածկագիրը	Պետական բյուջեից	Այլ միջոցներից նախատեսված	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր	Այլ աղբյուրների անվանումները
1	3	4	5	6	7	8	9	10	11	12
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝	x	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	***4100***									
Էներգետիկ ծառայություններ	**4212**									
Կոմունալ ծառայություններ	**4213**									
Կապի ծառայություններ	**4214**									
Ապահովագրական ծախսեր	**4215**									
Գույքի և սարքավորումների վարձակալություն	**4216**									

Հանձնեց՝

Տնօրեն՝---------- Կազմակերպություն՝----------

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 3

2023թ. «հունվարի» «26»

կնքված N *ԴՏՊ-1160-11009/Ե-1/23* պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 202__ թվականի պետական բյուջեի----------ամսում փոփոխուն ծախսերի գծով փոխհատուցման ենթակա և հաստատուն ծախսերի գծով փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ

Ծախսային հոդվածներ		Հաստատված նախահաշվի գումարը		Հաշվետու ժամանակահատվածում			Տարեսկզբից աճողական			
Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը	ծածկագիրը	Պետական բյուջեից	Այլ միջոցներից նախատեսված	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր	Այլ աղբյուրների անվանումները
1	3	4	5	6	7	8	9	10	11	12
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝	x	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	***4100***									
Էներգետիկ ծառայություններ	**4212**									
Կոմունալ ծառայություններ	**4213**									
Կապի ծառայություններ	**4214**									
Ապահովագրական ծախսեր	**4215**									
Գույքի և սարքավորումների վարձակալություն	**4216**									

Հանձնեց՝

Տնօրեն՝---------- Կազմակերպություն՝----------

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված 5

2023թ. «հունվարի» «26» -ին
կնքված N ԴՏՊ-1160-11009/Ե-1/23 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ----- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.
ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
_____	_____
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 6

2023 թ. «հունվարի» «26» -ին
կնքված N N *ԴՏՊ-1160-11009/Ե-1/23* պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Դրամաշնորհառու «ԼԻԱՐԺԵՔ ԿՅԱՆՔ» ՀԿ
Ծրագրի անուն *«Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում - հանուն անկախ կյանքի»*
Ծրագրի տևողություն 01.01.2023թ - 31.12.2023թ

Հ/Հ	Բյուջեի տողի նկարագրական	Տոկոս	Միավոր	Միավորի քանակ	Միավորի արժեք (ՀՀ դրամ)	Պահանջվող գումար (ՀՀ դրամ)	Տոկոս ընդհանուրի մեջ
	Աշխատավարձ						
Ա							
1.1	Կազմակերպության նախագահ/ծրագրի ղեկավար	14	ամիս	12	70000	840000	11
1.2	Հաշվապահ	8	Ամիս	12	40000	480000	6
1.3	Ծրագրի համակարգող՝գործառնությունների ղեկավար	10	ամիս	12	45000	540000	7
1.4	Սոցիալական աշխատող	14	ամիս	12	70000	840000	11
1.5	Սոցիալական աջակցող	6	ամիս	12	30000	360000	5
1.6	Տիֆլոմանկավարժ	21	ամիս	12	100000	1200000	16
1.7	Համակարգչային ուսուցման մասնագետ	12	ամիս	12	60000	720000	10
1.8	Իրավախորհրդատվության և մոնիթորինգի մասնագետ	3	ամիս	12	15000	180000	2
1.9	Վարորդ/ասիստենտ	12	ամիս	12	60000	720000	10
Ընդամենը Ա						**5880000**	79
Բ	**Ծրագրային ծախսեր**						
2.1	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	58	ամիս	12	54000	648000	9
2.2	Տրանսպորտային նյութեր	37	ամիս	12	35000	420000	5
2.3	Համակարգչային ծառայություններ	5	ամիս	12	5000	60000	1
	Ընդամենը Բ					**1128000**	**15**
Գ	**Գործուղում**						
Ընդամենը Գ						**0**	0
Դ	**Վարչական ծախսեր**						
4.1	Էներգետիկ ծառայություններ	11	ամիս	12	4000	48000	1
4.2	Կապի ծառայություններ	11	ամիս	12	4000	48000	1
4.3	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	23	ամիս	12	8000	96000	1
4.4	Գրասենյակային նյութեր	14	ամիս	12	5000	60000	1
4.5	Կենցաղային նյութեր	9	ամիս	12	3000	36000	0
4.6	Աուդիտորական ծառայություններ	32	անգամ	1	134000	134000	2
	Ընդամենը Դ					**422000**	6
	Ընդամենը					**7430000**	**100**

Դրամաշնորհառու «ԼԻԱՐԺԵՔ ԿՅԱՆՔ» ՀԿ

Ծրագրի անուն *«Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում - հանուն անկախ կյանքի»*

Ծրագրի տևողություն 01.01.2023թ - 31.12.2023թ

Հ/Հ	Բյուջեի տեսակը	Պահանջվող գումարը (ՀՀ դրամ)	Բյուջեի տողի նկարագրական
	Աշխատավարձ		
Ա1	**Ծրագրի աշխատակազմի աշխատավարձ**		
1.1	Ծրագրի համակարգող՝ գործառնությունների ղեկավար	540000	Ծրագրի համակարգողի հաստիքի համար հաշվարկվել է ամսական 45000դրամ աշխատավարձ*12ամիս=540000դրամ
1.2	Սոցիալական աշխատող	840000	Ծրագրի սոց.աշխատողի հաստիքի համար հաշվարկվել է ամսական 70000դրամ աշխատավարձ*12ամիս=840000դրամ
1.3	Սոցիալական աջակցող	360000	Ծրագրի սոց.աջակցողի հաստիքի համար հաշվարկվել է ամսական 30000դրամ աշխատավարձ*12ամիս=360000դրամ
1.4	Տիֆլոմանկավարժ	1200000	Ծրագրի տիֆլոմանկավարժի հաստիքի համար հաշվարկվել է ամսական 100000դրամ աշխատավարձ*12ամիս=1200000դրամ
1.5	Համակարգչային ուսուցման մասնագետ	720000	Ծրագրի համակարգչային ուսուցման մասնագետի հաստիքի համար հաշվարկվել է ամսական 60000դրամ աշխատավարձ*12ամիս=720000դրամ
1.6	Իրավախորհրդատվության և մոնիթորինգի մասնագետ	180000	Ծրագրի իրավախորհրդատվության և մոնիթորինգի մասնագետ հաստիքի համար հաշվարկվել է ամսական 15000դրամ աշխատավարձ*12ամիս=180000դրամ
1.7	Վարորդ/ասիստենտ	720000	Ծրագրի վարորդ ասիստենտի հաստիքի համար հաշվարկվել է ամսական 60000դրամ աշխատավարձ*12ամիս=720000դրամ
Ա2	**Ղեկավար անձնակազմի աշխատավարձ**		
1.1.1	Կազմակերպության նախագահ/ծրագրի ղեկավար	840000	Ծրագրի ղեկավարի հաստիքի համար հաշվարկվել է ամսական 70000դրամ աշխատավարձ*12ամիս=840000դրամ
1.1.2	Հաշվապահ	480000	Ծրագրի հաշվապահի հաստիքի համար հաշվարկվել է ամսական 40000դրամ աշխատավարձ*12ամիս=480000դրամ
	Ընդամենը Ա2	**1320000**	
	Ընդամենը Ա	**5880000**	
	Ծրագրային ծախսեր		
2.1	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	648000	Շահառուների տեղափոխման նպատակով նախատեսվում է ամսական միջին կտրվածքով տաքսի ծառայության համար ծախսել 54000դրամ*12ամիս =648000դրամ
2.2	Տրանսպորտային նյութեր	420000	Նախատեսվում է տրանսպորտային նյութերի ձեռք բերման համար ամսական միջին կտրվածքով ծախսել 35000դրամ*12ամիս =420000դրամ
2.3	Համակարգչային ծառայություններ	60000	Նախատեսվում է ամսական համակարգչային ծառայությունների համար ծախսել 5000դրամ*12ամիս=60000դրամ
	Ընդամենը Բ	**1128000**	
Գ	**Գործուղում**		
	Ընդամենը Գ	**0**	
Դ	**Վարչական ծախսեր**		
4.1	Էներգետիկ ծառայություններ	48000	Հաշվարկվել է միջին ամսական կտրվածքով 83կվտ/ժ էլեկտրոէներգիայի ծախս *48դրամ*12ամիս=48000դրամ

4.2	Կապի ծառայություններ	48000	Նախատեսվում է ամսական կապի ծառայությունների համար ծախսել 4000դրամ*12ամիս=48000դրամ
4.3	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	96000	Նախատեսվում է մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման համար ամսական միջին կտրվածքով ծախսել 8000դրամ*12ամիս =96000դրամ
4.4	Գրասենյակային նյութեր	60000	Նախատեսվում է ամսական միջին կտրվածքով գրասենյակային նյութերի ձեռք բերման համար ծախսել 5000դրամ*12ամիս=60000դրամ
4.5	Կենցաղային նյութեր	36000	Նախատեսվում է կենցաղային նյութերի ձեռք բերման համար ամսական միջին կտրվածքով ծախսել 3000դրամ*12ամիս=36000դրամ
4.6	Աուդիտորական ծառայություններ	134000	Նախատեսվում է իրականացնել ծրագրի աուդիտ,որի համար նախատեսված գումարը կկազմի 134000դրամ
Ընդամենը Դ		**422000**	
Ընդամենը		**7430000**	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված 7

2023 թ. «հունվարի» « 26 » -ին
կնքված N ԴՏՊ-1160-11009/Ե-1/23 պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

NN ը/կ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	անվանումը	**նկարագիրը**	**կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները**	**ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**	**միջոցառման իրականացման վերջնաժամկետը**	**հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը**	**պահանջվող գումարը (դրամ)**
	Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում	Ծրագրի հիմնական նպատակն է ապահովել տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող (չտեսնող) անձանց ինքնուրույն կենցաղավարման, տեղաշարժվելու, տրանսպորտից օգտվելու իրավունքը, ուսուցանել և զարգացնել անկախ կյանք վարելու հմտություններ, նպաստել նրանց սոցիալ-հոգեբանական խոչընդոտների հաղթահարմանը, սոցիալական ներառմանը հասարակություն:	Ծրագրի սկզբում իրականացվում է կարիքների և կարողությունների գնահատում, Գնահատման արդյունքում մշակվում է սոցիալ-վերականգնողական անհատական ծրագիր, Սոցիալ-վերականգնողական անհատական ծրագրում նախանշվում են շահառուի հետ իրականացվող ծառայությունները:	Ըստ շահառուների թվի սոցիալ-վերականգնողական անհատական ծրագրերի առկայություն: Շահառուների այցելությունների գրանցում այդ նպատակով պահվող մատյանում: Կազմակերպությունում հաճախումների պլանի /դասացուցակի/ առկայություն: Սոցիալ-վերականգնողական անհատական ծրագրերի իրականացման արդյունքում 70% շահառուների մոտ արձանագրել կարողությունների և անկախ կյանքի հմտություններ աճ:	**31.12.2023**	Կատարված աշխատանքների վերաբերյալ կազմակերպությունը ներկայացնում է՝ • ամսական հաշվետվություն, այդ թվում շահառուների ցուցակը • եռամսյակային հաշվետվություն՝ կատարված աշխատանքների արդյունքային որակական ցուցանիշների ապահովման ուղղությամբ: Հաշվետվությունները ներկայացվում են նախարարություն՝ https://e-	**7 430 000 (յոթ միլիոն չորս հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ**

		Ծրագիրն իրականացվում է դրամաշնորհի տրամադրման մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից: Ծրագրի շրջանակներում իրականացվում է **տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող (չտեսնող) անձանց (այսուհետ՝ շահառու)** սպիտակ ձեռնափայտով տեղաշարժվելու հմտությունների ուսուցանում և աջակցություն՝ հաղթահարելու սոցիալ-հոգեբանական բնույթի խոչընդոտները: Ծառայությունների տրամադրման շրջանակներում կազմակերպությունն առաջնորդվում է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ				request.am/hy հարթակով:	
			Չտեսնող անձանց ինքնուրույն և անվտանգ տեղաշարժվելու, ինքնուրույն կենցաղավարման հմտություններ ուսուցանելու նպատակով՝ ծրագրի շրջանակներում իրականացվում են՝ • սեմինարներ հմուտ բանախոսների աջակցությամբ, այդ թվում՝ հաջողության հասած հաշմանդամություն ունեցող անձինք, հատուկ մանկավարժներ և այլն). • չտեսնող անձանց ֆիզիկական պատրաստվածություն (չտեսնող անձանց ինքնուրույն և անվտանգ տեղաշարժվելուն ֆիզիկապես պատրաստելուն ուղղված միջոցառումներ. • սեմինար-հանդիպումներ ընտանիքի անդամների հետ, որոնք միտված են օգնել շահառուների ընտանիքի անդամներին հաղթահարելու իրենց	Ձևավորել և զարգացնել շահառուների ինքնասպասարկման, կենցաղավարման հմտությունները: Նպաստել շահառուների կարողությունների հզորացմանը, հմտությունների զարգացմանը, համայնքային կյանքին նրանց լիարժեք մասնակցությանը, ուսուցանել նրանց կարողություններին համարժեք գիտելիքներ, զարգացնել անկախ և ինքնուրույն կյանք վարելու կարողությունները, փոխել վերաբերմունքն իրենց խնդիրների և շրջապատում իրենց ունեցած դերի նկատմամբ: Շահառուների մասնակցությամբ կազմակերպվում է տարեկան նվազագույնը 2 միջոցառում՝ ուղղված շահառուների սոցիալական ներառմանը:			

		օրենքով ամրագրված հիմնական սկզբունքներով	հարազատի ֆիզիկական խնդրի հանդեպ կարծրատիպերը, վերաբերմունքը, վախերը և պատրաստ լինելու աջակցել նրանց ինքնուրույնությունը զարգացնելու հարցում. • համակարգչային հատուկ ծրագրերի և կենցաղավարման հմտությունների ուսուցում. • էքսկուրսիաների կազմակերպում. • հատուկ մանկավարժի պարապմունքներ, որոնց նպատակն է մանր և խոշոր մոտորիկայի, լսողական ընկալման, շոշափելիքի, համի, հոտոտելիքի զգայարանների և դրանց արդյունավետ գործածման հմտությունների զարգացումը, հավասարակշռության, ճիշտ կեցվածքի, ճիշտ քայլքի, որոշակի ուղղությամբ անշեղ քայլելու հմտությունների զարգացում. • սպիտակ ձեռնափայտի միջոցով տեղաշարժման ուսուցում, որը ներառում				

			է շոշափելի տարրական պատկերներ գծելը, շոշափելի քարտեզների կազմելը և կիրառելը, սպիտակ ձեռնափայտի կիրառելը: խորհրդատվություն շահառուների ընտանիքի անդամներին:				
	Ընդամենը						

Լրացուցիչ դրույթներ

- Հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ մատուցելու նպատակով կազմակերպությունը պետք է ապահովի տարածքի մատչելիությունը (թեքահարթակ, վերելակ, սանհանգույց, հարմարեցված գույք և այլն), տրանսպորտային միջոցի առկայություն՝ շահառուների տեղափոխումը ըստ անհրաժեշտության կազմակերպելու նպատակով և ունենա մասնագիտական անձնակազմ:
- Նախընտրելի է ծառայութունը մատուցել նաև մարզերում, ուստի մարզերում և Երևանում գործունեություն իրականացնող մի քանի կազմակերպությունների դիմելու դեպքում, նախապատվությունը առնվազն 1 լոտով կտրվի մարզում գործունեություն ծավալող կազմակերպությանը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

_____

/ստորագրություն/

Կ.Տ